ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

30.11.2016թ. N 07/22/4750-Ե

Ձեր ----------

<<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ Լ.ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան ՀՀ Կոտայքի մարզպետին հասցեագրված Ձեր՝ 24.11.2016 թ. N 312-ի 2 հարցման (մարզպետարանում մուտքագրվել է 28.11.2016թ.), տեղեկացնում ենք, որ.

1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով, ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ ձեռքբերելու համար, ՀՀ Կոտայքի մարզպետարանին հատկացվել է ընդամենը 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) դրամ:
2. Սահմանված կարգի համաձայն ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմը գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԿՈՏ-ՇՀԾՁԲ-16/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգ (հայտարարությունը և հրավերը սահմանված կարգով հրապարակվել են նաև ՀՀ ֆինանսների նախարարության gnumner.am կայքում):

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գործընթացի հետագա փուլերում համապատասխան գնման պահանջը վերանայվել է, հիշյալ գործարքը չի կայացել և մարզպետարանի աշխատակազմը տնտեսել է պետական համապատասխան միջոցներն ու 2016 թվականին հաշվեկշռում գտնվող ավտոմեքենաների պահպանման համար գումար չի ծախսվել:

Հարգանքով՝

/ Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Օհանյան
Հեռ. (0223) 2-73-37